«Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության
միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի տնօրեն
Քալաշյան Մ.Ա.

«23» հունիսի, 2026 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ ի.գ.թ., դասախոս Մելիքսեթյան Մ. Է.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Ընտանեկան և կենցաղային բռնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Մասնագիտություն՝ 042101.00.6 «Իրավագիտություն»
Կրթական ծրագիր՝ 042101.01.6 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

Մեր հասարակության և պետության զարգացման բոլոր փուլերում ընտանիքի և երեխայի շահերի պաշտպանությունը մշտապես գտնվել է պետության ուշադրության կենտրոնում:

Ընտանիքի ամրությամբ է պայմանավորված հասարակության առաջընթացը, բնակչության թվաքանակն ու որակը, և պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության 16 հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Պետությունը երաշխավորում է երեխաների իրավունքների պաշտպանությունը և ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանիքում երեխայի դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:

Պատահական չէ, որ մեր երկրի անկախացումից հետո ընկած ժամանակաշրջանում պետությունը առավել մեծ ուշադրություն է դարձնում ընտանիքի և երեխայի շահերի պաշտպանության հարցերին, կատարելագործելով օրենսդրական դաշտը՝ հիմքում ունենալով միջազգային իրավական այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և այլն:

Դասընթացի նպատակը և խնդիրները

"Ընտանեկան և կենցաղային բռնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում" դասընթացի ուսումնասիրության նպատակն է ուսանողների մոտ ձևավորել Հայաստանի Հանրապետությունում ընտանեկան և կենցաղային բռնությունից պաշտպանության իրավակարգավորումների վերաբերյալ համալիր պատկերացում, ընտանեկան և կենցաղային բռնության քրեական պաշտպանության առանձնահատկությունների նորմերի իրազեկում, ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ոլորտում լիազորություններ ունեցող պետական մարմինների գործառույթների ուսումնասիրումը և զարգացնել դրանց գործնական կիրառման հմտությունները:

Դասընթացի շրջանակներում լուծվում են հետևյալ խնդիրները.

- ընտանեկան և կենցաղային բռնության հասկացության, տեսակների ուսումնասիրություն;

- ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, պաշտպանական միջոցների կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրություն;

- ընտանեկան և կենցաղային բռնության քրեաիրավական պաշտպանության առանձնահատկությունների ուսումնասիրություն,.,

- ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ոլորտում պետական մարմինների իրավակիրառ պրակտիկայի վերլուծության, ընդհանրացման հմտությունների ձևավորում:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Օբյեկտ՝ այն հասարակական հարաբերությունները, որոնք ծագում են ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կապակցությամբ, ընտանեկան և կենցաղային բռնության քրեաիրավական գնահատականի առանձնահատկությունները, դրան նպաստող հիմնական սոցիալ-հոգեբանական և այլ գործոնները, ընտանեկան և կենցաղային բռնության դեմ պայքարի և կանխարգելման քրեաիրավական և վարչական բնույթի հիմնական ուղղությունները:

Առարկա՝ ընտանեկան և կենցաղային բռնությունիծ տուժածների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ապահովող օրենսդրության նորմերը, նշված նորմերի կիրառելիությունը գործնականում, նշված ոլորտում գործառույթներ իրականացնող պետական մարմինների աշխատանքային գործունեությունը:

Դասընթացի մուտքային պահանջները

Դասընթացին մասնակցելու համար ուսանողը պետք է տիրապետի իրավունքի ընդհանուր սկզբունքներին, ցանկալի է նաև ընդհանուր պատկերացում ունենալ իրավական նորմի կառուցվածքի և իրավունքի ճյուղերի համակարգի մասին:

Դասընթացի յուրացման արդյունքում ձեռք բերվող գիտելիքները և կարողությունները

Դասընթացի յուրացման արդյունքը ապահովում է անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների համապատասխան ՈԱՇ-ի վերջնարդյունքներին:

Գիտելիքները՝

1. Ընտանեկան և կենցաղային բռնությանը և տեսակների տարանջատումը
2. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակների ուսումնասիրությունն և կիրառման առանձնահատկությունները
3. Ներքին գործերի նախարարության լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում
4. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու ընթացակարգը, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի մշտադիտարկման մեխանիզմները
5. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի առանձնահատկությունների ուսումնասիրությունը
6. Ծնողների իրավունքներն ու պարտականությունների շրջանակի՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի կարգավորումներով, դրանց իրացման առանձնահատկությունները
7. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության առանձնահատկությունները ՀՀ-ում,

8. Մասնագիտական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հարակից ոլորտների, ինչպես նաև՝ մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոնների և կոռուպցիային հակազդման վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումը:

Հմտությունները՝

- գիտելիքի կիրառման հմտությունները՝

  - Կարող է կիրառել ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում մասնագիտական գիտելիքները իրավակիրառ պրակտիկայում հանդիպող իրավական խնդիրների լուծման համար:

  - Կարող է ինքնուրույն կազմել և մշակել ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով պաշտպանական միջոցների կիրառման՝ որոշումների նախագծեր, տալ իրավաբանական եզրակացություններ ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով արդարադատության ոլորտում առկա խնդրների վերաբերյալ, տրամադրել իրավաբանական խորհրդատվություն ընտանեկան և կենցաղային բռնության քրեաիրավական հարցերի վերաբերյալ;

  - Կարող է բանակցություններ վարել, ներկայացնել իր պաշտպանյալի իրավունքները և օրինական շահերը կոնկրետ քրեական վարույթի շրջանակներում, ներառյալ իրավական դիրքորոշումների մշակումը, փաստաթղթերի պատրաստումը, փաստարկների ներկայացումը և դատական նիստերում իրավունքների պաշտպանությունը;

  - Կարող է իրավունքի մեկնաբանման կանոնների կիրառմամբ վերլուծել և պարզաբանել քրեաիրավական և վարչաիրավական նորմերը;

  - Կարող է օրինական մեթոդներով որոնել և գտնել քրեական վարույթներով դատական և իրավական այլ ակտեր կամ այլ տեղեկություններ, օգտագործել դրանք մասնագիտական ոլորտում խնդրի լուծման համար, ինչպես նաև՝

հետևել իրավական ակտերի փոփոխություններին;

- Կարող է վերհանել իրավակիրառ պրակտիկայում առաջացած իրավական խնդիրը՝ կապված արարքի քրեաիրավական որակման, պատժի նշակաման հետ, տարբերակել գործի լուծման համար էական փաստերը, որոշել կիրառելի քրեաիրավական նորմը և կիրառել փաստերի նկատմամբ, եզրահանգում անել գործի լուծման վերաբերյալ;
- Կարող է արագ կողմնորոշվել իրավական խնդիրներ (այդ թվում՝ անկանխատեսելի) լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը, այդ թվում՝ առաջ քաշելով հակափաստարկներ;

- ընդհանրական իմացական հմտությունները՝

- Կարող է դրսևորել քննական և փաստարկված վերլուծական մոտեցում՝ իրավական խնդիրները բացահայտելու և դրանց լուծման ուղիները մշակելու համար։

- Կարող է մասնագիտական խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ցուցաբերել նախաձեռնողականություն և ստեղծագործական մոտեցում։

Կարողունակությունը (կոմպետենցիան)՝

- ինքնուրույնությունը և պատասխանատվությունը՝

- Ունակ է՝ ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն ընտանեկան և կենցաղային դեպքերով քրեական արդարադատության ոլորտում;
- Ունակ է՝ պարբերաբար ուսումնասիրելու ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով ՀՀ գործող օրենսդրությունը, պրակտիկան,
- Ունակ է՝ ուսումնառության և (կամ) աշխատանքի ընթացքում կատարելու առաջադրանքներ՝ ուղղված ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով քրեական, վարչական օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի

զարգացմանը, ցուցաբերելու անհրաժեշտ ինքնուրույնություն և ստանձնելու պատասխանատվություն մասնագիտական որոշումներ կայացնելիս:

- Ունակ է՝ աշխատելու թիմում:

- Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների քրեական իրավունքի ոլորտում՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

- Ունակ է կառուցել մեղադրանքի և պաշտպանության ռազմավարություն և հիմնավորել իր դիրքորոշումը մասնագիտական էթիկայի կանոնների պահպանմամբ;
- Ունակ է ձևակերպել հիմնավոր եզրակացություններ և առաջարկություններ քրեական իրավունքի հարաբերությունների վերլուծության հիման վրա
- Ունակ է քրեական արդարադատության իրականացման գործընթացում քրեական իրավունքի նորմերի մեկնաբանման տարբեր եղանակների օգտագործմանը;
- -Ունակ է իրականացնել ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերով իրավապահ և իրավակիրառ պրակտիկայի վերլուծության և ամփոփում;
- Ունակ է իրավակիրառ գործունեության մեջ ընտանեկան և կենցաղային դեպքերովմասնագիտական խնդիրներ լուծելիս հիմնավորել սեփական դիրքորոշումը, նախնական իրավական գնահատական տալ, իրականացնել վարչարարություն, որի արդյունքում կայացնել իրավաչափ պաշտպանական միջոց:

Դասավանդման եղանակները և մեթոդները

"Ընտանեկան և կենցաղային բռնության հիմնախնդիրները ՀՀ-ում" դասընթացի դասավանդման գործընթացում իրականացվում է դասավանդման դասական (ավանդական) և նորարարական (ինտերակտիվ) մեթոդների համադրություն: Բացի

դասական դասախոսությունից և սեմինարից, նախատեսվում է նաև ուսանողների ակտիվ ներգրավումը քրեական իրավունքի առավել խնդրահարույց ասպեկտների քննարկմանը՝ բանավեճերի կազմակերպման միջոցով: Բանավեճի ընթացքում ուսանողները բաժանվում են երկու խմբի, որոնցից յուրաքանչյուրը հիմնավորում է իր դիրքորոշումը: Դասավանդման գործընթացում նախատեսվում է օգտագործել case-law մեթոդը, որի շրջանակներում ուսանողները քրեաիրավական վերլուծության են ենթարկում կոնկրետ իրավիճակ, զարգացնելով պրակտիկ հմտությունները:

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է 2 ակադեմիական կրեդիտ (72 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 28 ակադեմիական ժամ նախատեսվում է գործնական պարապմունքների համար: Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 2,3,4 ուսումնական տարիների աշնանային կիսամյակներում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	Ընդամենը, ակադ. ժամեր
1.Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	32
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	32
1.1.2.Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	14
1.1.3 Դասախոսություններ	22

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և

ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. **Ընտանեկան և կենցաղային բռնության հասկացությունը և տեսակները**	**4**	**2**	**2**
Թեմա 2. **Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի քրեաիրավական կարգավորումը**	3	2	**1**
Թեմա 3. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները և կիրառման առանձնահատկությունները	**5**	**3**	**2**
Թեմա 4. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների խախտման համար նախատեսված իրավաբանական պատասխանատվությունը	**2**	**1**	**1**
Թեմա 5. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ը նտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձան ց պաշտպանության գործառույթներ իրակա նացնող մարմինները և հատուկ կառույցներ ը	**2**	**1**	**1**

Թեմա 6. Ներքին գործերի նախարարության լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում	**2**	**1**	**1**
Թեմա 7. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի մշտադիտարկումը	**3**	**2**	**1**
Թեմա 8. Ընտանեկան և կենցաղային բռնության գործադրմանը նպաստող պատճառներն ու պայմանները	**2**	**1**	**1**
Թեմա 9. Ծնողների իրավունքներն ու պարտականությունները՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի կարգավորումներով	**3**	**2**	**1**
Թեմա 10. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության առանձնահատկությունները ՀՀ-ում	**2**	**1**	**1**
Թեմա 11. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման,	**2**	**1**	**1**

ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգի առանձնահատկությունները			
Թեմա 12. **Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի առանձնահատկությունները**	**2**	**1**	**1**
Ընդամենը	**32**	**18**	**14**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա **1. Ընտանեկան և կենցաղային բռնության հասկացությունը և տեսակները**

Բռնության հասկացությունը: Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակները: Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակների տարանջատման առանձնահատկությունները: Ընտանիքի անդամների շրջանակի սահմանումը:

Թեմա **2. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի քրեաիրավական կարգավորումը**

Ընտանեկան և կենցաղային բռնության տեսակների համապատասխանելիությունը ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներին: ՀՀ քրեական օրենսգրքի 26, 27 ,29 գլուխների հանցակազմերի որակման առանձնահատկությունները:

Թեմա **3. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության**

միջոցների տեսակները և կիրառման առանձնահատկությունները

Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների տեսակները: Նախազգուշացումը՝ որպես պաշտպանական միջոց և դրա կիրառման առանձնահատկությունները, բողոքարկման ժամկետները: Անհետաձգելի միջամտության որոշումը՝ որպես պաշտպանական միջոց և դրա կիրառման առանձնահատկությունները, բողոքարկման ժամկետները, նախատեսված սահմանափակումները: Պաշտպանական որոշումը՝ որպես պաշտպանական միջոց և դրա կիրառման առանձնահատկությունները, բողոքարկման ժամկետները, նախատեսված սահմանափակումները:

Թեմա 4. Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների խախտման համար նախատեսված իրավաբանական պատասխանատվությունը

Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների խախտման համար նախատեսված քրեական պատասխանատվությունը: Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցների խախտման համար նախատեսված վարչական պատասխանատվությունը:

Թեմա 5. Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականաց նող մարմինները և հատուկ կառույցները

Լիազոր մարմնի լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության անձանց պաշտպանության ոլորտում: Ներքին գործերի նախարարության լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության անձանց պաշտպանության ոլորտում: Կրթության ոլորտի լիազոր մարմնի լիազորություններն

ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության անձանց պաշտպանության ոլորտում: Առողջապահության ոլորտի լիազոր մարմնի լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության անձանց պաշտպանության ոլորտումԽՀ մարմինների լիազոր մարմնի լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության անձանց պաշտպանության ոլորտում: Աջակցության կենտրոնի և ապաստարանի լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության անձանց պաշտպանության ոլորտում:

Թեմա 6. Ներքին գործերի նախարարության լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում

Ներքին գործերի նախարարության լիազորություններն ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում, ՀՀ ներքին գործերի նախարարի հրամաններով հաստատված լիազորությունների շրջանակը, վարչարարություն իրականացնելու ընթացակարգը

Թեմա 7. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելը և հաշվառումից հանելը, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի մշտադիտարկումը

Ընտանեկան և կենցաղային բռնության գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը սահմանելու առանձնահատկությունները: Ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի

գնահատման չափորոշիչները կիրառելու առանձնահատկությունները: Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը:ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման իրականացման կարգը:

Թեմա **8. Ընտանեկան և կենցաղային բռնության գործադրմանը նպաստող պատճառներն ու պայմանները**

Ընտանեկան և կենցաղային բռնության գործադրմանը նպաստող պատճառների ուսումնասիրությունը: Ընտանեկան և կենցաղային բռնության գործադրման պայմանների ուսումնասիրությունը:

Թեմա **9. Ծնողների իրավունքներն ու պարտականությունները՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի կարգավորումներով**

Երեխայի իրավունքների շրջանակը: Ծնողների իրավունքներն ու պարտականությունների շրջանակի ուսումնասիորթյուն: Երեխայից առանձին ապրող ծնողի կողմից ծնողական իրավունքների իրականացումը: Խորթ երեխաներին դաստիարակելու և խնամելու՝ խորթ ծնողների պարտականությունը: Ծնողական իրավունքների պաշտպանությունը: Երեխային վերցնելը նրա կյանքը և առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքում:

Թեմա **10. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության առանձնահատկությունները ՀՀ-ում**

Առանց ծնողական խնամքի մնացած երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք: Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքները: Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությունը:

Թեմա **11. Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերման, ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման, ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման կարգի առանձնահատկությունները**

Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի հայտնաբերումն ու դրանց մասին ահազանգումը, հայտնաբերման դեպքում համագործակցությունը: Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց ուղղորդման իրականացման կարգը: Ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի կրկնման ռիսկի գնահատման գործընթացի առանձնահատկությունները:

Թեմա **12. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրի առանձնահատկությունները**

Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացման ծրագրով նախատեսված համալիր միջոցառումները և դրանց կազմակերպման կարգը: Ծրագրի բովանդակությունն ու դրա բաղադրիչները, իրականացման նախապայմանները:

Դասընթացի ապահովվածությունը գրականությամբ

1. 1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (05.05.2021թ.) ՀՕ-199-Ն 2021.05.17-2021.05.30
2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (18.04.2003թ.) ՀՕ-528-Ն ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:
3. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք (06.12.1985թ.) ՀՍՍՀԳՍՏ-1985/23:
4. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրք (09.11.2004թ.) ՀՕ-123-Ն ՀՀՊՏ 2005.01.19/4(396) Հոդ.60:
5. «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կեցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության» ՀՀ օրենք
6. “Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք
7. ՀՀ կառավարության 20.02.2025թ-ի թիվ 181-Ն որոշում
8. ՀՀ կառավարության 16.01.2025 թվականի թիվ 35-Ն որոշում
9. «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին»՝ ՀՀ ՆԳ նախարարի՝ 12.12.2024թ.-ի թիվ 86-Լ հրաման,
10. «Ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները հաստատելու մասին»՝ ՀՀ ՆԳ նախարարի՝ 13.12.2024թ.-ի թիվ 88-Լ հրաման,
11. «Ընտանեկան և կենցաղային բռնության գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը սահմանելու մասին»՝ ՀՀ ՆԳ նախարարի՝ 17.12.2024թ.-ի թիվ 91-Լ հրաման,
12. «ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից կանխարգելիչ հաշվառման շրջանակում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելը

կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկման իրականացման կարգը սահմանելու մասին»՝ ՀՀ ՆԳ նախարարի՝ 17.12.2024թ.-ի թիվ 93-Լ հրաման,

13. «Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների ձևերը սահմանելու մասին» ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի՝ 04.12.2024թ.-ի թիվ 24-Լ հրաման,
14. «Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին աջակցության կենտրոն ուղղորդելու վերաբերյալ իրազեկման թերթիկը սահմանելու մասին» ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի՝ 04.12.2024թ.-ի թիվ 22-Լ հրաման,

Մասնագիտական գրականություն՝

15. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Գ.Թ. Գրիգորյան, Դ.Ա. Թումասյան, (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2022, 480 էջ:
16. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Հատուկ մաս, Դ.Ա. Թումասյան, Կ.Հ. Հովհաննիսյան, (ուսումնական ձեռնարկ) Երևան, 2022, 914 էջ:
17. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս/ Գ. Ղազինյանի խմբագրությամբ: Երևան: ԵՊՀ հրատ., 2012, 1040 էջ:
18. Ն.Տոնոյան «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ», Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014, 187 էջ
19. Веред Е.Б. Неисполнение обязанностей по воспитанию несовершеннолетнего (уголовно-правовой и криминологический аспекты): дис. … канд. юрид. наук. Ростов н/Д., 2004, 166 էջ
20. Пухтий Е.Е. Преступления против семьи и несовершеннолетних: вопросы техники конструирования составов дифференциации ответственности: дис. … канд. юрид. наук. Ярославль, 2004, 210 էջ

21. Ю.Е.Пудовочкин, “Ответственность за преступления против несовершеннолетних», Спб, 2002, 488 էջ